

տոնէական եկեղեցու առաջին երեք դարու նահատակներ են, որոնք տօնում են բոլոր քրիստոնեայ եկեղեցիներից:

Յայտնի է, որ մեր եկեղեցին համարեա թէ եօթերորդ դարից յետոյ այլ ևս չէ սրբագրծել որև է նահատակի յիշատակը, եթէ չհաշուենք երջ. Սիմեօն կաթուղիկոսի կարգադրութեամբ ընդունուած՝ Հայ եկեղեցու քաջ ախոյեաններ՝ Թովիչան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու սրբացումը:

Մեր ձեռքի տակ եղած հրատարակութիւնը վերաբերում է 12-դ դարից յետոյ եղած ժամանակամիջոցին, մինչդեռ յայտնի է, որ մեր եկեղեցին ունեցել է և միշտ ունի անթիւ նահատակներ, որոնց կեանքի վերաբերեալ տեղեկութիւնները ի հարկէ՝ նոյնպէս վերին աստիճանի հետաքրքրական են. պէտք է յուսալ, որ կամ այս գրքի հրատարակիչները և կամ ուրիշները հձեռնարկեն ի մի ժողովել նաև մինչև 12-րդ դար եղած նահատակների կենսագրութեան վերաբերեալ նիւթերը:

Յիշեալ գիրքը, բազի այն՝ որ ընթերցանութեան հաճելի և պատմական տեղեկութիւններով հետաքրքրական մի նիւթէ, ծանօթացնում է նաև Հայ ժողովրդի հոգու այն արիութեան և վեհութեան հետ, որով այնքան զօրեղ է եղել Հայ եկեղեցնին: Բազի այս ամենը, գիրքը հետաքրքրական է նաև իրըն նիւթ թէ եկեղեցու, թէ արտաքին քաղաքական պատմութեան և թէ երկրին վերաբերեալ տեղեկութիւններով և նոյնպէս յեղուի ուսումնասիրութեան տեսակէտից. այս պատճառով արժանի է խրախուսանքի:

2. Հրաշալի դար, պրօֆ. Ռ. Ա. ԸՆԼԱԿԵՍԻ. թարգմ. Ստ. Լիսիցեան. 1904, Թիֆլիս:

Անգլիացի նշանաւոր բնագէտի վերսիշեալ գիրքը մի համառօտ զեկուցումն է անգեալ տասնիններորդ դարու գիտնական նիւթերի և առհատարակ քաղաքակրթութեան մասին: Յայտնի է, որ անցեալ դարը զարմանալի գիւտերով հարուստ է և ինչ որ մարդկութիւնը չէր տեսել իւր գոյութեան ամբողջ շրջանում՝ տեսաւ հարիւր տարուայ ընթացքում: Բնութեան ուժերը, որ առաջ սարսափեցնում էին մարդուն և աչ ու երկեւդ աղդում նրան՝ այս դարում իրանք խոնարհեցին մարդկային խելքի և կամքի առաջ և նրա բարօրութեան նպաստամատոց

գարձան։ Ըսդին և ելեքարականութիւնը տուեցին մարդուն երկաթուղիներ, շոգենաւեր, շողեկառքեր և արագակառքեր, մեքենաները, լուս, կրակը՝ բոլորը եկան ծառայելու մարդկութեան կարիքներին, Անցեալ դարու մտաւոր զարգացման արդիւնքների ամփոփումն է փորձել անելու անդրիացի զիտնականը, իսկ գրքի վերջում մի յօդուած է աւելացրել մեր գովածքարքակրթութեան թերութիւնների մասին։

Գիրքը այնքան հետաքրքրական է, որ աւելորդ չենք համարում մեր ընթերցողների առաջ դնել մի քանի երեսներ այս թարգմանութիւնից։ Ամփոփ կերպով պատմում է Հեղինակը անդեալ դարու զիտնական զիւտերի և զիտնական զաղաքարների մասին մի քանի գլուխ, իսկ ԽV գլխում թուում է վերսիշեալ զարգացման զլիաւոր կետերը, որ մենք յիշատակում ենք այստեղ։

Զարգացման գլխաւոր արդիւնքները հետեւելներն են։

1. Երկաթուղիները, որոնք չինովին յեղաշրջեցին ցամաքային տեղափոխութեան ձևերը և կեանքի պիտոյըների բաշխման եղանակները։

2. Շոգենաւերը, որոնք նոյնպիսի ազդեցութիւն ունեցան ովկիանական տեղափոխութեան վրայ և հարկադրեցին բոլորովին ձևափոխել ամբողջ աշխարհի նաւատորմիղները։

3. Ելեկտրական հեռակերը, որը աւելի ևս խոր յեղափոխութիւն առաջացրեց մարդկանց մտաւոր հաղորդակցութեան մէջ։

4. Հեռախոսը, որը տեղափոխում է կամ, աւելի ճիշտ, վերարտագրում է խօսակցի ձայնը հեռաւորութեան վրայ։

5. Շփումից բոցավառուող լուցկիները, որոնք յեղաշրջեցին կրակ հանելու եղանակները։

6. Գագային լուսաւորութիւնը, որը վերին աստիճանի լաւացրեց փողոցային և ամեն ուրիշ լուսաւորութիւն։

7. Ելեկտրական լուսաւորութիւնը, —մի բարելաւում, ոռը սպառնում է գուրս մղել գազը։

8. Լուսանկարչութիւնը, —մի արուեստ, որը նոյնպիսի նըշանակութիւն ունի ընութեան արտաքին ձևերի համար, որպեսին տպագրութիւնը ունի մարդկային մտքերի համար։

9. Փոնոգրաֆը կամ ձայնագիրը, որը պահում է վերատագրում և ձայներն այնպէս, ինչպէս լուսանկարչութիւնը պահում է վերարտագրում է ձևերը։

10. Ռեօնտգենեան ձառագայթները, որոնք բազմաթիւ անթափանցելի առարկաները թափանցելի են դարձնում և նոր աշխարհ են բանում լուսանկարչութեան համար։

11. Սպեկտրային վերլուծութիւնը, որը այն աստիճան

ընդարձակում է մեր ունեցած տեղեկութիւնները տիեզերքի մասին, որ նրա օգնութեամբ հնարաւորութիւն ենք ստանում շաստա իմանալու աստղերի համեմատական ջերմութիւնն ու քիմիական բաղադրութիւնը, գտնելու աստեղային մարմինները և չափելու նրանց շարժման արագութիւնը նոյնիսկ այն դէպ-քում, երբ նրանք բոլորովին անախանելի են մեզ համար:

12. Անզգայացնող միջոցների գործադրութիւնը, որը հը-նարաւորութիւն է տալիս ամենազժուար վիրաբուժական օպե-րացիններն անելու առանց ցաւի:

13. Հականնեխողական միջոցների գործադրութիւնը վի-րաբուժական օպերացիաների ժամանակ, որը աւելի և ընդար-ձակեց մեր ունեցած միջոցները մարդկասին կեանքը փրկելու համար:

Անցեալ դարու բարիեները թուելուց յետոյ հեղինակը ամենայն անկողմնապահութեամբ գալիս է թուելու այդ ժամա-նակամիջոցի և վատ կողմերը, որոնք հազիւ թէ իսպառ չեն նսեմացնում հրաշալի դարու արժեքը: Մելիտարիզմի հասցրած սոսկալի զրկանքները, չբաւորութեան աշուելի պատկերները, մաշուան և միքանի հիւանդութիւնների տարածումը, տնյագ հարստանալու դաժան ձգտման զարգացումը, յանցանքների բազմանալը նոյնպէս հրաշալի դարու բարաբար թողաբակրթութեան սե կողմն են կազմում:

Հնայելով որ հեղինակը շատ մթին զոյներով է նկարա-գրում անցեալ դարու թերութիւնները, սակայն իւր վերջնա-կան եղրակացութիւնները նա պարփակում է դարձեալ զերմ յոյսով թէ ապագան երջանկութիւն պիտի բերէ մարդկութեա-նը երջանիկ են հաւատացողները. և եթէ յաւազոյն ապագայի յոյ-սըն էլ չինի, մտածող մարդու համար կեանքը պիտի իսպառ կորցնէ իւր արժեքը: Հեղինակի գրքի վերջին խօսքերը հետեւալն է.

«Այժմ կարող ենք տասնիններորդ դարի առաջադիմու-թեան և ետադիմութեան ընդհանուր գումարը հանել և որոշ չափով հաշիւ տալ մեզ, թէ ինչ դատավճիռ կը կարդայ մեր զիեին ապագան: Ենանք, որ այս հարիւրամեակը աչքի է ընկ-նում բացառիկ և բոլորովին չը լսուած առաջադիմութեամբ՝ տիեզերքի և նրա մէջ գործող բարդ ոյժերի զիտութիւնների մէջ: Ենանք նոյնպէս, որ այս զարը աչքի է ընկնում այդ գի-տութիւնների գործադրութեամբ բազմաթիւ նպատակներով, գործադրութեամբ, որը, համապատասխան կերպով ուղղուած լինելով, պիտի կարողանար գոհացնել ամեն մարդու բոլոր պէտքերը, մտցնել ամեն մարդու կեանքի մէջ յարմարութիւն, ուրախութիւն և վիշագոյն հոգեկան զարդացում և սաստիկ մարձրացնել մարդկային բարօրութեան ընդհանուր մակերեսը:

թը. Մարդկային գիտութեան սահմանները այն աստիճան լայ-
նացել են, որ մեր առջև բոլորովին նոր հորիզոններ են բաց-
ւում նոյնպիսի շրջաններում, ուր՝ թւում էր՝ թէ երբէք չի
կարողանալ թափանցել մարդկային խելքը, և քանի աւելի ենք
սովորում, այնքան աւելի ենք ընդունակ դառնում ըմբռնելու
տիեզերքի շարժունակ ընդարձակուող տարածութիւնը. Դիտու-
թեան մարդկանց մասին իրաւամբ կարելի է ասել, որ այժմ
նրանք աստուածներ են դարձել՝ բարին ու չարը ձանաշղ,
որովհետեւ նրանք ոչ միայն կարողանում են ծառացեցնել բնու-
թեան խորհրդաւոր ոյժերը մարդկութեան օգտին, այլև շատ
անդամ կարողանում են բանալ՝ մարդկութիւնը մաշղող բազմա-
թիւ չարիբների բուն աղբիւրները, կարողանում են ոչնչացնել
ցաւը, երկարացնել կեանքը և անչուն կերպով մեծացնել մարդ-
կային ցեղի Փիլիքական և հոգեկան վայելբները.

Բայց բանի աւելի է գիտութիւնը բաց անում մեր աչքի
առջև մարդկութեան անհուն երջանկութեան հնարաւորութիւ-
նը, այնքան աւելի ստիպուած ենք լինում խոստովանուելու,
որ լիովին անընդունակ ենք եղել խելացի կերպով օգտուելու
գիտութեան տուած միջոցներից: Չեսքի տակ ունենալով ամեն
ինչ, որպէսզի առանց բացառութեան բոլոր մարդկանց մատա-
կարաբենք ամեն անհրաժեշտ պիտոյք, յարմարութիւն և նոյն
իսկ փարթամութիւնն և միաժամանակ տանք լիակատար հան-
գիտ ու ժամանակ մտաւոր և գեղարուեսատական զուարձու-
թիւններ վայելելու համար, մենք ընդհակառակը՝ պնդէս ա-
նաստուած կերպով աղջատել ենք մեր ընկերական, հասարա-
կական տնտեսութիւնը, որ տուել ենք բալորովին աւելորդ,
ուստի և կորստարեր մեղկութիւն ու փարթամութիւն միայն
շատ բչերին, մինչդեռ միլիլուսաւոր մարդիկ ստիպուած են ամ-
բողջ կեանքում չարչարուել, տանջուել՝ սոսկ առողջ կեանքի
համար անհրաժեշտ պիտոյքների պակասութիւնից: Եւ փոխա-
րէն գիտնական մարդկանց հզօր ջանքերը պայտ չարիբների գէմ
ուղղելու, տեսնում ենք, ինչպէս ամենասազարէմ ազգերի
կառավարութիւնները զրահաւորում են իրանց ժողովուրդները
ուսից մինչեւ գլուխ և ազգային հարստութեան ահազին մասն
ու ըրուր գիտնական կարողութիւնները վատնում են մարդ-
կային կեանքը, սեփականութիւնը ու երջանկութիւնը կործա-
նող միջոնների պատրաստութեան վրայ:

Առողջութեան աղբիւրները լիակատար գիտենալով հան-
գերձ, մենք թշլի ենք տալիս և նոյնիսկ հարկադրում ենք մեր
ազգարնակութեան մեծամասնութեանը՝ ապրել և աշխատել
այնպիսի պայմանների մէջ, որոնք խիստ կրծատում են կեան-
քը, և բացի պայտ տեսնում ենք, որ մեր երեխաներից 50,000-ից
մինչեւ 100,000 հոգի մահի են մատնուած մեր դատապարտելի
և յանցաւոր անփութութեան շնորհիւ:

Հարստանալու ետևից վայրագ կերպով ընկած՝ մենք ու-
կին մարդկային կեանքից թանկ ենք համարում, շատերի հա-

մար կեանքը այն աստիճան ծանր ենք դարձնում, որ ինքնապանութիւնը, ինելագարութիւնը, և յանցանքները օրէցօր աւելի ու աւելի շատանում են Զը նայելով որ ունենք աշխատանքը խնայող մեքենաներ, որ մեր կամքին ենք ենթարկել բնութեան շյժերը, գյուղեթեան կոիւն այժմ աւելի ևս կատաղի և դարձել, բանթէ երբևէ առաջ, և տարեցտարի մեր ժողովրդի աւելի ու աւելի մեծ մասն է իցնում աղքատների գերեզմանները:

Երբ ապագայ դարերի լոյսը կը ցրի մեր նիւթական առաջդիմութեան հրապօյրները, պատմութիւնը անկասկած կամի, որ մեր ղեկավարող շրջանների բարոյական մակերևոյթը ողորմելիի չափ ստոր էր, և որ մենք անարժան էինք տիրելու այն մեծ և բարերար շյժերին, որ մեր ձեռքն է դրել զիառութիւնը:

Իսյց թէև անցնող դարը այդքան բազմաթիւ օրինակներ է տուել մեր ապիկարութեան, նաև այնուամենայնիւ տուել է մեզ նաև լաւագոյն ապագայի լոյս ծշմարիտ մարդասիրութիւնը, ժամանակակից հասարակական չարիքը ոչնչացնելու հասատ ցանկութիւնը, հաստատ համոզմանքը, թէ այդ չարիքը ննարաւոր է ոչնչացնել և, վերջապէս, անիախտ հաւատը դէպի մարդկային բնութիւնը - այս ամենը երբէք չէ զգացուել այնպէս ազդու, այնպէս վառ կերպով և չէ աճել այնպէս արագ, որպէս ներկայում Դէպի սոցիալիզմն ընթացող շարժումը, որ նկատում է վերջին տասը տարիների ընթացքում եւ բոլոյայի և Ամերիկայի բոլոր գիլիաւոր երկիրներում, այս բանի ամենալաւ ապացոյն է: Այս շարժումը զրաւում է որպէս մի ջին դասակարգի բարձր և աւելի զարգացած մասի մեջ, նշյնպէս և բանուորների շարքերում երիտասարդ սերնդի միտքը ժողովուրդը սկսում է հասկանայ հասարակական չարիքների բուն պատճառները, որոնք այժմ վնասում են բոլոր դասակարգերին միատեսակ՝ օրինութեան փոխարէն անէծք դարձնելով զիտութեան պարզեներից շատերը: Եթէ այլ ևս մի բառորդդար տեի այս կրթիչ ընթացքը, յաջորդ սերունդը միաժամանակ և՛ ոյժ, և՛ գիտութիւն կունենայ անհրաժեշտ բարենորդութիւններին ձեռնամօւթ: լինելու համար:

Այժմ ընկած ենք բարենպաստ հոսանքի մէջ: Ունենք մեծ բանաստեղծներ, մեծ զրողներ, մեծ մտածողներ, որոնք սովորեցնում և առաջնորդում են մեզ: ունենք օրէցօր ստուարացոյ խումբ նախանձախնդիր, աշխատաւորների, որոնք տոկութեամբ լոյս են տարածում և լաւագոյն օրերի մօտենալուն են անձնաղոյն ծառայում: Եւ եթէ ներկայ Դարը ականատես է եղել մարդկային պատմութեան մէջ բոլորովին չտեսնուած նիւթական և մտաւոր առաջադիմութեանը, ապագայ դարը լիովին քաղելու է այդ առաջադիմութեան հասունացած պտուղները, բարձրացնելով մարդկային բարոյական և հասարակական կեանքը նոյնչափ նոր, նոյնչափ մեծ և նոյնչափ առաջ չը լսուած

բարձրութեան վրայ: Ապագայի այդ առաջադիմութեան մասին է, որ մարդարէանում է Լիւխ Մորրիսը իր մի կրակոտ ուսանաւորի մէջ, որով և յարմար եմ դատում վերջացնել իմ աշ-խատութիւնը.

Կը գայ օրը, երբ այս կռուի, հեծեծանքի ժըխորից բարձր ու աղաս եղայլութիւն կը բարձրանայ փառաւոր. Երբ կը զընջոււեն նեղ, եսական ձգտումները սըրտերից, ու կը լինի մի նպատակ—երջանկութիւնն ընդհանուր, կը գայ օրը, երբ աշխարհքում, ինչպէս Յիսուս ցանկացաւ, Մարդը կըլինի մարդու համար քընօրյոյ եղբայր սրտացաւ:

Կըգայ օրը, եղբայրութիւնն երբ կը լինի զօրաւոր, քան թէ փոքրիկ այս կապերը, որ աշխարհըն են բաժանում. Երբ կըլլուն թնդանօթներն ու փողերը մնծագոռ, Կ'իշնի զրօշն ու կը մընայ սուրը իրեն պատեանում. Երբ որ կըլլինեն պատնէշները լեզուների, կըրօնի, Ու կըմուլոււն մարդիկ իրար—մի մարդկութիւն կը լինի:

Գալով թարգմանութեանը, կարեոր ենք համարում դի-աելու, որ Ս. Լիսիցեանը առհասարակ այն հազուաղիւա հայ զբագէտներից է, որ գովելի եռանդով և աշխատասիրութեամբ պարապած են թարգմանութիւններով: Նրա մի քանի յօդուած-ները կրում են աշխատանքի և գիտութեան կնիք: Ցաւալի և սակայն, որ մինչեւ այսօր պ. Լիսիցեանը չի կարողանում ընտե-լանալ հայ լեզուի ոգւոյն և այս պատճառով լեզուն շատ ծանր է, աեղ տեղ գոեհչկական, քերականական արամարանա-կան համաձայնութիւնից զուրկ, երկար պերիօդներով ծան-րացած:

Ցուսով ենք, որ ինքը թարգմանիչը կը համաձայնի մեզ, երբ կը կարդայ մեր ցոյց տուած տեղերը: Հէնց զըքի առա-ջին գլխում ասում է. «Դրեթէ նոյնչափ նշանաւոր, որչափ և այս երկաթուղիներն են և շողենաները—է տեղափոռու-գթեան նոր միջոցը երկու և երեք անւանի վելօսիպեղների օգնութեամբ (երես—14)»—ոչինչ հասկանալ չի կարելի այս կտորից: Այս ինչ էւ տառ է, որ միացնում է քերականօրէն անհամաձայն նախադասութեան մասերը, այս ինչ երեք հան-ւանի վելօսիպեղներ են. Պարզ է, որ պ. Լիսիցեանը «անւա-նի» խօսքը դործ է դնում «անի» ունեցող», «անիւաւոր» և կամ «ակնանի» խօսքի տեղու «Անւանի» խօսքը նոյն ուղղագրու-թեամբ կը նշանակի և նշանաւոր, յայտնի, ուստի պէտք էր ուրիշ ձեռով արտայատել խօսքի միտքը: Դախարդասութեան

մասերի սխալ և հայերէն լեզուին անսովոր դասաւորութեան օրինակներ էլ բազմաթիւ են զրբի մէջ:

«Աստիճանաւորական ինելքի նոյն ապիկարութիւնը մէկ շանդամ հաստատուած սկզբունքը ընդհանրացնելու երևում է հնակ փստային օրդերների գործում» (Եր. 22):

Մի քեչ յետոյ նոյնպէս անտանելի ոճ և խօսքերի դասաւորութիւն:

«Երկաթուղիների՝ կառավարութեան ձեռքն անցնելովը, և երբ նրանք կը ծառայեն բազառապէս ընդհանուրի օգտին, և միասնական սակագնի սղկրունքը ամենաընդարձակ գործադրութիւն կը դառնէ, և տարածութեան երկարութեան համար ցյաւելեալ վարձը շատ և շատ պակսեցրած կլինի, ինչպէս որ այդ արուած է մեր ներքին թղթակցութեան մէջ կը դիմար»:

Աչա տեսէր թէ որքան խորթ է մեր ականջին հետեւեալ պարբերութիւնը.

«Սկզբում հեռախօսը յաջողութեամբ կարողանում էր գործել միայն կարճ տարածութիւնների վրայ, բայց կատարելավագործութիւնը՝ տարածութիւնը երկարացաւ, և այժմ մենք դանում ենք և այլն (Եր. 24):

Եյսպիսակ դուրս է զալիս, որ հեռախօսը կատարելագործութիւնով՝ ոչինչ չարեց, այլ տարածութիւննը երկարացաւ. Այս տեսակ տարօրինակ համաձայնութիւնն շատ է պատահում զրբի մէջ՝ օրինակ հետեւեալ երեսում (26) թարգմանիչը ասում է.

«Նրանց անտաները չափազանց խոնաւ լինելով՝ կրակի գործածութիւնը հաւանական է՝ մատչելի է լինում նրանց միայն տարուայ չը եղանակներին»: Ինչ խօսք, որ պ. Լիսիցեանին բոլորովին անծանօթ է մեր լեզուի՝ գլխաւոր և երկրորդական նախադասութիւնների համաձայնութեան կանոնը. Փոխանակ չփոնաւ. լինելով՝ պէտք էր ասել «Փոնաւ լինելու պատճառով» և մի այլ ոճով՝ արտայայտել նոյնը. Պատահում են և գուշկական ոճեր, օրինակ «Ժազայ համբաւ» (Եր. 24), որ գիտնական գրքի մէջ թազայ խօսքը բոլորովին իւր տեղումը չէ, որպէս և մեր լեզուի մէջ կամ քիչ պատահող կամ բոռ լորովին չգործածական վերջաւորութիւններ։ Օրինակ տասնեւմէկերորդ գլխում (Եր. 36) պ. Լիսիցեանը ասում է տաղանդաւոր նկարիչների մասին, թէ նրանք առհասարակ և ակաւեւոր են:

«Սակաւաւոր» շատ քիչ պատահող և սխալ խօսք է այս լուրսը

հասկացողութեան համար, որ հեղինակը ի նկատի է ունեցել։ Հաս բառերով կարելի է փոխարինել այս ոճը—օր։ Հազուադիւ, սակաւաթիւ և այլն։

Բայց գիտնական գրքերի թարգմանչի կողմից մեծ պակասութիւնը լեզուի տաղակալիութիւնն է։ Հայերէն առհասարակչնեն կարդում, իսկ կարդացող դասակարգն էլ կարող է հասկանալ միմիայն լեզուն և ոչ երկար պերիոդներով զբաժ գրքեր։ Տեսէք թէ ինչ ծանր լեզուով է թարգմանած այս հրաշալի

գիրքը։

Այս և մի ուրիշ օրինակ։

Ենթադրում են, որ այդ հողմերը ունեն բազմազան լայնութիւն և բարձրութիւն, պատուելու և ամեն կողմ շարժուելու տարրեր արագութիւն, ինչպէս դազերի մասնիկները ունեն։—որ այդ հողմերի թիւը աշազին, գրեթէ անսահման մեծ է, —ուր նրանը պիտի խմբուեն զանազան միաւորութիւնների նայելով իրանց մեծութեանն ու շարժման նմանութեանը, և որ այսպիսով առաջ պիտի բերեն տարրեր, իսկ այս տարրերի փոխարձ ներգործութիւնը պիտի արտայայտուի քիմիական միաւորութիւնների զանազան եղանակներով, որից պիտի առաջանան մասնկական նիւթի բոլոր ձեերը։

Խորհուրդ կտայինք պ. Նիսիցեանին իւր գովելի աշխատասիրութիւնը տպարդիւն չգարձնելու համար ուշադրութիւն գարձնել լեզուի վերայ և գիտնական գրքեր թարգմանելու ժամանակ ձեռքի տակ ունենալ Միթթարեանների նոյնանման նիւթի վերաբերեալ գրքերը։

Յանաստեղծ իդէալիստ Շիլէր. պատկերազարդ. գրեց Դոկ. Փիլ. Ս. Թառալեանց։

Անգեալ տարուայ թուով Ս. Պետերբուրգ հրատարակուած է պ. Ս. Թառայեանցի մի չքնաղ և մեծադիր պատկերազարդ հատոր գերմանական նշանաւոր բանաստեղծ Փրից Շիլէլի գլուխ գլխարապէս կեանքի և մասամբ գրականական գործունէութեան մասին։ Ոչ մեր նկատողութեան ծաւալը և ոչ մեր ձեռքի տակ եղած միջոցները թոյլ չեն տալիս մեզ երկար կանգ առնելու այս նշանաւոր գրքի բովանդակութիւնը պատմելու, ուստի կրաւականանաց մի քանի խօսքով բացատրելու այս գրքի նշանակութիւնը։ Հեղինակը բոլորովին իրաւացի կերպով նկատում է յառաջաբանի մէջ, որ մեր գրակա-